Հաստատում եմ՝
Գործնական Հոգեբանության և Սոցիոլոգիայի
«Ուրարտու» համալսարանի
Ռեկտոր _____ Ս. Մեդրակյան
« 02.02.2023թ. (գիտխորհրդի արձ.№ 5) »

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻՈԼՈԳԻԱՅԻ «ՈՒՐԱՐՏՈՒ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Գործնական Հոգեբանության և Սոցիոլոգիայի «Ուրարտու» համալսարանի ուսանողական խորհուրդը (այսուհետ՝ ԳՀՍՈՒ ՈՒԽ) գործող ուսանողական կազմակերպություն է, որը ԳՀՍՈՒ ուսանողության ինքնակառավարման, ընտրովի ներկայացուցչական մարմին է:

2. ԳՀՍՈՒ ՈՒԽ-ն ապաքաղաքական, ապակուսակցական և ներհամալսարանական կազմակերպություն է:

3. ԳՀՍՈՒ ՈՒԽ-ն արտահայտում և պաշտպանում է ուսանողության շահերը, նպաստում նրանց կրթական, գիտական, ստեղծագործական, ֆիզիկական, բարոյական և հոգևոր զարգացմանը:

4. ԳՀՍՈՒ ՈՒԽ-ն իր գործունեությունն իրականացնում է ՀՀ Սահմանադրությանը, ՀՀ գործող օրենսդրությանը, ԳՀՍՈՒ կանոնադրությանը և սույն կանոնադրությանը համապատասխան:

5. ԳՀՍՈՒ ՈՒԽ-ի լրիվ անվանումն է՝ հայերեն՝ Գործնական Հոգեբանության և Սոցիոլոգիայի «Ուրարտու» համալսարանի ուսանողական խորհուրդ, ռուսերեն՝ Студенческий СоветУниверситета практической психологии и социологии «Урарту», անգլերեն՝ Student Council of of the “Urartu” University of Practical Psychology and Sociology:

6. ԳՀՍՈՒ ՈւԽ-ի հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան Կորյունի 19ԱԳործնական Հոգեբանության և Սոցիոլոգիայի «Ուրարտու» համալսարան:

2. ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7. ԳՀՍՈՒՄ ՈՒԽ-ի նպատակներն ու խնդիրներն են՝

1) պաշտպանել ուսանողների շահերն ու իրավունքները,

2) ապահովել ուսանողների մասնակցությունը համալսարանի կառավարմանը,

3) համալսարանի կառավարման համապատասխան մարմինների քննարկմանը ներկայացնել ուսանողությանն առնչվող հարցեր,

4) մասնակցել ուսումնական գործընթացի կազմակերպմանը և ուսուցման արդյունավետության բարձրացմանն ուղղված ծրագրերի մշակմանն ու իրականացմանը,

5) իրազեկել ուսանողներին իրենց իրավունքների ու պարտականությունների մասին, նպաստել ուսանողների իրավագիտակցական մակարդակի բարձրացմանն ու ակտիվ քաղաքացիական կեցվածքի ձևավորմանը,

6) միավորել համալսարանի ուսանողական կազմակերպությունների, ակումբների և միությունների ջանքերը՝ նպաստելու ուսանողության համար բարենպաստ միջավայրի ձևավորմանը և խթանելու ուսանողների գիտական, կրթական, հոգևոր, մշակութային, ստեղծագործական ու ֆիզիկական զարգացմանը,

7) աջակցել ուսանողների սոցիալական վիճակի բարելավմանը, կազմակերպել ուսանողների ազատ ժամանցն ու հանգիստը

8) մասնակցելԳՀՍՈՒտարածքումներքինկարգապահությանպահպանմանը,

9) ինչպեսնանլուծել ուսանողներին հուզողայլխնդիրներ:

8. 7-րդ կետում նշվածնպատակների և խնդիրների իրականացումն ապահովելու համար ԳՀՍՈՒ ՈՒԽ-ն համագործակցում է ՀՀ -ում և արտերկրում գործող բուհական, ուսանողական, երիտասարդական և այլ կազմակերպությունների, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական այլ անձանց հետ:

9. ԳՀՍՈՒ ՈՒԽ – ում գործունեությունն իրականացվում է անվճարելիության (հասարակական հիմունքներով) սկզբունքով:

10. ԳՀՍՈՒ ՈՒԽ-ն սահմանված կարգով կարող է իրականացնել հրատարակչական գործունեություն:

3. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄԸ ԵՎ ԿԱՄԱՎՈՐԸ

11. ԳՀՍՈՒ ՈՒԽ-ի անդամների կազմը համալրվում է տարին մեկ անգամ մասնագիտական խմբերում՝ ուղղակի և բաց ընտրությամբ: Ընտրված են համարվում այն

թեկնածուները, ովքեր հավաքել են առավել թվով ձայներ: Ընտրությունները համարվում են կայացած, եթե ներկա է մասնագիտական խմբի ուսանողների կեսից ավելին: Անդամներն ընտրվում են յուրաքանչյուր մասնագիտական խմբից՝ մինչև 10 ուսանողից բաղկացած խմբիցընտրվում է առնվազն մեկանդամ, 10-20-ի դեպքում՝ առնվազն երկու, իսկ20-իցավելի ուսանողներ ունեցող խմբերից՝ առնվազն երեք:

12. ԳՀՍՈՒ Ուխ-ի անդամը պետք է լինի ԳՀՍՈՒ ուսանող և ուսումնական տարվա արդյունքներով ցուցաբերի բարձր առաջադիմություն:

13. ԳՀՍՈՒ ՈՒխ-ի անդամի տեղը թափուր մնալու դեպքում յոթ ուսումնական օրերի ընթացքում անցկացվում է նոր ընտրություն:

14. Սույն կանոնադրության դրույթները տարածվում են նաև հեռակա ուսուցման համակարգում սովորողների վրա:

15. ԳՀՍՈՒ Ուխ-ի աշխատանքներին կարող են ներգրավվել նաև կամավորներ, ովքեր իրենց ցանկությամբ մասնակցում են ԳՀՍՈՒ ՈՒխ-ի աշխատանքներին, սակայն չունեն քվեարկության իրավունք:

4. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

16. ԳՀՍՈՒ ՈՒխ-ի անդամն իրավունք ունի՝

1) ընտրել և ընտրվել ԳՀՍՈՒՈՒխ-ի նախագահի, մշտական հանձնաժողովի պատասխանատու, ԳՀՍՈՒ ՈՒխ-ի կողմից ստեղծված ժամանակավոր հանձնաժողովի անդամ կամ պատասխանատու,

2) ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն ԳՀՍՈՒՈՒխ-ի աշխատանքների և ղեկավար մարմինների գործունեության վերաբերյալ,

3) մասնակցել ԳՀՍՈՒ Ուխ-ի կողմից կազմակերպված միջոցառումներին,

4) ԳՀՍՈՒ ՈՒխ-ի քննարկմանը ներկայացնել տարբեր հարցերի վերաբերյալ առաջարկություններ,

5) մասնակցել այն ժողովին, որտեղ քննարկվում է իրեն վերաբերող հարցը կամ առաջարկությունը, արտահայտել կարծիք քննարկվող հարցերի շուրջ,

6) իր դիմումի համաձայն դուրս գալ ԳՀՍՈՒ Ուխ-ից,

7) օգտվել համալսարանի և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներից:

17. ԳՀՍՈՒ ՈՒխ-ի անդամը պարտավոր է՝

8) ենթարկվել համալսարանի ներքին կարգապահական կանոններով հաստատված նորմերին,

9) գործել ԳՀՍՈՒ ՈՒԽ-ի կանոնադրությանը համապատասխան,

10) լինել ԳՀՍՈՒ ՈՒԽ-ի որևէ մշտական հանձնաժողովի անդամ,

11) կատարել համալսարանի ղեկավարության և պաշտոնատար անձանց որոշումները և հանձարարականները, ինչպես նաև ԳՀՍՈՒ ՈՒԽ-ի վարչության որոշումները, օժանդակել ՈւԽ-ի հեղինակության և գործունեության ամրապնդմանը,

12) մասնակցել ԳՀՍՈՒ ՈՒԽ-ի նիստերին, ինչպես նաև ԳՀՍՈՒ ՈՒԽ-ի կողմից անցկացվող միջոցառումներին,

13) կատարել համալսարանի կանոնադրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ պարտականություններ:

18. ԳՀՍՈՒ ՈՒԽ-ի անդամի լիազորությունները կարող են դադարեցվել հետևյալ դեպքերում՝

1) անձնական դիմումի համաձայն,

2) ԳՀՍՈՒ ՈՒԽ-ից հեռացվելու,

3) Ժողովի որոշմամբ՝ ժողովից պարբերաբար բացակայելու, աշխատանքից խուսափելու և ուսանողի պարտականությունները չկատարելու, համալսարանից հեռացվելու կամ համալսարանը ավարտելու դեպքերում:

5. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

19. ԳՀՍՈՒ ՈՒԽ-ի բարձրագույն մարմինն է ԳՀՍՈՒ ՈՒԽ-ի ժողովը (այսուհետ՝ Ժողով): Ժողովին պարտավոր են մասնակցել ԳՀՍՈՒ ՈՒԽ-ի բոլոր անդամները:

20. Ժողովը վարում է ԳՀՍՈՒ ՈՒԽ-ի նախագահը: Ժողովն իրավազոր է, եթե մասնակցում են ԳՀՍՈՒ ՈՒԽ-ի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին: Ժողովի կողմից որոշումներն ընդունված են համարվում, եթե կողմ են քվեարկել ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությունը: Ժողովի արդյունքներն ամփոփվում են արձանագրությամբ, որտեղ նշվում է Ժողովի օրակարգը, մասնակիցների թիվը, քննարկվող հարցերի բովանդակությունը, որոշումները և քվեարկության արդյունքները: Արձանագրությունը ստորագրում է ԳՀՍՈՒ ՈՒԽ-ինախագահը և քարտուղարը:

21. ԳՀՍՈՒ ՈՒԽ-ի նախագահի ընտրությունը կատարվում է բաց քվեարկությամբ, ընտրությանը մասնակցում են ԳՀՍՈՒ ՈՒԽ-ի անդամները: Ընտրված է համարվում այն թեկնածուն, որի օգտին քվեարկում են ներկաների կեսից ավելին: Անհրաժեշտ ձայներ չհավաքելու դեպքում առավելագույն ձայներ ունեցող երկու թեկնածուները անցնում են 2-րդ փուլ: 2- րդ փուլում ընտրվում է այն թեկնածուն, ում օգտին քվեարկել են ներկաների հարաբերական մեծամասնությունը:

22. ԳՀՍՈՒ ՈՒԽ-ի նախագահը ընտրվում է 3 տարի ժամկետով:

23. ԳՀՍՈՒ ՈՒԽ-ինախագահը՝

1) Կազմակերպում և համակարգում է ԳՀՍՈՒ ՈՒԽ-ի գործունեությունը,

2) ընդունում է որոշումներ սույն կանոնադրությամբ նախատեսված իր լիազորությունների շրջանակներում,

3) ներկայացնում է ԳՀՍՈՒ ՈՒԽ-ն համալսարանի գործող կառավարման մարմիններում

4) ներկայացնում է ԳՀՍՈՒ ՈՒԽ-ի գործունեության մասին տարեկան հաշվետվություն մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 20-ը:

5) հայտարարում է բանավոր նկատողություն ԳՀՍՈՒ ՈՒԽ-ի անդամի կողմից սույն կանոնադրության պահանջները չկատարելու դեպքում,

6) ԳՀՍՈՒ ՈՒԽ-ի ժողովի օրակարգ է ընդգրկում ԳՀՍՈՒ ՈՒԽ-ի անդամի վերաբերյալ հարցեր,

7) պարգևատրում է ԳՀՍՈՒ ՈՒԽ-ի պատվոգրով ԳՀՍՈՒ ՈՒԽ-ի անդամին կամ համալսարանի այլ ուսանողին՝ ԳՀՍՈՒ ՈՒԽ-ի կողմից կազմակերպված տարբեր միջոցառումներին ակտիվ մասնակցություն ցուցաբերելու համար:

24. ԳՀՍՈՒ ՈՒԽ-ի խորհրդակցական մարմիններն են ԳՀՍՈՒ ՈՒԽ-ի մշտական հանձնաժողովները: Մշտական հանձնաժողովները ստեղծվում և լուծարվում են վարչության որոշմամբ: ԳՀՍՈՒ ՈՒԽ-ի հանձնաժողովների թիվը չի կարող գերազանցել 8-ը: Մշտական հանձնաժողովները ձևավորվում են բացառապես ԳՀՍՈՒ ՈՒԽ-ի անդամներից: Անհրաժեշտության դեպքում ԳՀՍՈՒ ՈՒԽ-ի մշտական հանձնաժողովի նիստին կարող են մասնակցել նաև կամավորներ նախագահի թույլտվությամբ: ԳՀՍՈՒ ՈՒԽ-ի յուրաքանչյուր անդամ կարող է ընդգրկվել մի քանի հանձնաժողովներում բայց, ոչ ավելի քան՝ երեքում: Հանձնաժողովի պատասխանատուներն ընտրվում են ԳՀՍՈՒ ՈՒԽ-ի անդամների կողմից, հաշվի առնելով նրանց մասնագիտությունը, անձնային հատկանիշները և այլ տվյալներ: Հանձնաժողովի պատասխանատուները իրենց գործունեության վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնում են մայիս և դեկտեմբեր ամիսներին:

25. ԳՀՍՈՒ ՈՒԽ-ի անդամների 1/3-ի կողմից կարող է բարձրացվել ԳՀՍՈՒ ՈՒԽ-ի նախագահի անվստահության հարցը:

26. ԳՀՍՈՒ ՈՒԽ-ի փոխնախագահի և քարտուղարի թեկնածությունները կարող են առաջադրվել ԳՀՍՈՒ ՈՒԽ-ի նախագահի կողմից: Վերջիններս ընտրվում են ԳՀՍՈՒ ՈՒԽ-ի ժողովի կողմից ձայների պարզ մեծամասնությամբ:

6. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

27. ՈՒԽ-ի ֆինանսական միջոցները գոյանում են ԳՀՄՈՒ կողմից տրամադրվող արտաբյուջետային միջոցներից, ինչպես նաև այլ իրավաբանական անձանց կողմից հատկացված հանգանակություններից, նվիրատվություններից, ԳՀՄՈՒ կանոնադրությանը, սույն կանոնադրությանը չհակասող և ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից:

28. ՈՒԽ -ն անվճար, համաձայն սահմանված կարգի, օգտվում է ԳՀՄՈՒ տարածքային, գույքային, տեխնիկական և այլ միջոցներից:

29. ՈՒԽ – միջոցները օգտագործվում են կանոնադրական նպատակների և խնդիրների իրականացման համար:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պաշտոնը՝ ՈՒխ նախագահ

Պարտականությունները՝

- հաստատում է ՈՒխ տարեկան աշխատանքային պլանը,
- վերահսկում է ՈՒԽ վարչության անդամների պատասխանատվության ենթակա աշխատանքները
- մասնակցում է ՈՒխ ամենամսյա նիստերին,
- մասնակցում է ռեկտորատի, գիտական խորհրդինիստերին,
- կնքում է պայմանագրեր և համաձայնագրեր,
- ներկայացնում է համալսարանն արտահամալսարանական միջոցառումների ժամանակ,
- յուրաքանչյուր կիսամյակ հաշվետվությամբ ներկայանում է ռեկտորատին:
- կազմակերպում և անցկացնում է տարբեր բնույթի միջոցառումներ,
- հետևում է ֆինանսական ծախսերին:

Պաշտոնը՝ ՈՒԽ փոխնախագահ

Պարտականությունները՝

- հետևում է ՈՒխ-ի ներքինփաստաթղթերի ճիշտ ձևակերպմանը,
- համակարգում է ՈՒԽ վարչության անդամների պատասխանատվության ենթակա աշխատանքները
- մասնակցում է ռեկտորատի, գիտական խորհրդի նիստերին,
- կազմակերպում և անցկացնում է ՈՒխ ընտրությունները,
- մասնակցում է ՈՒխ ամենամսյա նիստերին,
- յուրաքանչյուր կիսամյակ հաշվետվությամբ ներկայանում է ՈՒխ նախագահությանը:

Պաշտոնը՝ ՈՒխ քարտուղար

Պարտականությունները՝

- հավաքագրում է ՈՒխ անդամների տվյալները և անհրաժեշտության դեպքում կապ հաստատում անդամների հետ,
- կազմակերպում և մասնակցում է ՈՒխ ամենամսյա նիստերին,

- կազմում է արձանագրություններ ՈւԽ նիստերի ժամանակ,
- վերահսկում է ՈւԽ արխիվը,
- անհրաժեշտության դեպքում ՈւԽ նախագահի հանձնարարությամբ
- ներկայացնում է համալսարանն արտահամալսարանական միջոցառումների ժամանակ,
- յուրաքանչյուր կիսամյակ հաշվետվությամբ ներկայանում է ՈւԽ վարչությանը:

Պաշտոնը՝ ՈՒԽ վարչության անդամ –արտաքին կապերի պատասխանատու

Պարտականությունները՝

- ՈւԽ նախագահի հետ միասին կնքում է պայմանագրեր և համաձայնագրեր, մասնակցում կամ անհրաժեշտության դեպքում ապահովում է ուսանողների ներկայությունն արտահամալսարանական միջոցառումներին,
- մասնակցում է ՈւԽ ամենամսյա նիստերին,
- յուրաքանչյուր կիսամյակ հաշվետվությամբ ներկայանում է ՈւԽ վարչությանը:

Պաշտոնը՝ ՈՒԽ վարչության անդամ -տեղեկատվության և գովազդի պատասխանատու

Պարտականությունները՝

- համագործակցում է բոլոր պատասխանատուների հետ՝
- համալսարանական ամսաթերթի տպագրման գործում,
- լուսաբանում է համալսարանական և արտահամալսարանական բոլոր միջոցառումները,
- վերահսկում է համալսարանի էլեկտրոնային կայքի ՈւԽ-ի էջը,
- մասնակցում է ՈւԽ ամենամսյա նիստերին,
- յուրաքանչյուր կիսամյակ հաշվետվությամբ ներկայանում է ՈւԽ վարչությանը:

Պաշտոնը՝ ՈՒԽ վարչության անդամ-գիտակրթականհարցերով պատասխանատու

Պարտականությունները՝

- մասնակցում է ՈւԽ ամենամսյա նիստերին,
- յուրաքանչյուր կիսամյակ հաշվետվությամբ ներկայանում է ՈւԽ վարչությանը:

Պաշտոնը՝ ՈՒԽ վարչության անդամ -մշակույթի, սոցիալական և սպորտի պատասխանատու

Պարտականությունները՝

- մասնակցում է տարբեր բնույթի միջոցառումների կազմակերպմանը,
- հայտնաբերում և միջոցառումներին ներգրավում է մշակույթի և սպորտի ոլորտներում ակտիվ ուսանողներին,
- մասնակցում է ՈւԽ ամենամսյա նիստերին,
- յուրաքանչյուր կիսամյակ հաշվետվությամբ ներկայանում է ՈւԽ նախագահությանը,
- ուսումնասիրում և ՈՒԽ վարչությանն է տրամադրում ուսանողների սոցիալական հարցերով կարիքները:

Պաշտոնը՝ կուրսի ավագ

Պարտականությունները՝

- կանոնակարգում է տվյալ կուրսի աշխատանքները,
- հետևում է հաճախումներին և լրացնում դասամատյանը, կատարում դասամատյանով նախատեսված պահանջները, հանդես է գալիս իր խմբի շահերի պաշտպանությամբ,
- մշտապես տեղյակ է պահում իր կուրսի ուսանողներին կազմակերպվող միջոցառումների մասին և ապահովում նրանց ներկայությունն այդ միջոցառումներին,
- կուրսի շրջանակներում կազմակերպում և անցկացնում է տարբեր բնույթի միջոցառումներ,
- կատարում է ՈւԽ նախագահի կողմից հանձնարարված աշխատանքները,
- մասնակցում է ՈւԽ ամենամսյա նիստերին,


Մասնագիտական խմբեր
Առկա, հեռակա, բակալավր, մագիստրատուրա
յուրաքանչյուր մասնագիտական խմբից՝ մինչև 10 ուսանողից բաղկացած խմբից ընտրվում է առնվազն մեկ անդամ,10-20-ի դեպքում՝ առնվազն երկու, իսկ 20-ից ավելի ուսանողներ ունեցող խմբերից՝ առնվազն երեք:
ՈՒԽ ժողով
ՈՒԽ նախագահ
ՈՒԽ վարչություն
ՈՒԽ վարչության անդամ-գիտակրթական հարցերով պատասխանատու
ՈՒԽ քարտուղար
ՈՒԽ վարչության անդամ - մշակույթի, սոցիալական և սպորտի հարցերով պատասխանատու
ՈՒԽ վարչության անդամ – արտաքին կապերի պատասխանատու
ՈՒԽ վարչության անդամ - տեղեկատվության և գովազդի պատասխանատու